«Վահրավարի օր» տոնի առթիվ

Ուղերձ

Հարգելի՛ վահրավարցիներ, սիրելի բարեկամներ

Այսօր նշվում է Վահրավար բնակավայրի տոնը՝ ծնունդ տալով մի գեղեցիկ ավանդույթի, որը համոզված եմ՝ կդառնա Մեղրի համայնքի մշակութային կյանքի կարևոր բաղադրիչ:

Սա ոչ միայն պատեհ առիթ է, այլև լավ հնարավորություն՝ վերստին առերեսվելու, թե որքան հարուստ է մեր հողը հայրենի և որքան խոր և ամուր են մեր հազարամյա արմատները:

Կաքավաբերդի գյուղախմբի գեղատեսիլ Վահրավարը գտնվում է կանաչազարդ ձորահովտում, ծովի մակարդակից 1380 մետր բարձրության վրա:

Բազմադարյա տարեգրությամբ գողտրիկ բնակավայր է, հարուստ պատմամշակութային հուշարձաններով, մասնակից պատմական անցքերի ու դեպքերի, ճանաչված՝ անվանի մարդկանցով: Գյուղն ուներ հանրաճանաչ գերդաստաններ, որոնցից են Աթանեսյանները, Ախպերջանյանները, Հարությունյանները, Համբարձումյանները, Մարգարյանները, Հովհաննիսյանները և ուրիշներ: Կարմիր վանքում է 1322 թվականին գրվել Վահրավարի Ավետարանը: Հիշատակարանը գրել է Հակոբ Խլաթեցի գրիչը վանքի Տիրանուն քահանայի խնդրանքով: Գյուղը հայտնի է իր բարեբեր դաշտերով, զուլալ ու սառնորակ ջրերով և աշխատասեր, բազմաշնորհ մարդկանցով, ովքեր դարեր շարունակ պահպանում են ավանդույթները ու ստեղծում նոր մնայուն արժեքներ:

Վահրավարն իր խորհրդով միավորում է Մեղրին սնուցող իր ջրի զուլալությունն ու վահրավարցու հոգևոր զորությունը, մեզ համար այն հնի ու նոր միասնության մի փառահեղ օրինակ է, ուրախության աղբյուր:

Տոնը հրաշալի հնարավորություն է մեկտեղելու բոլոր սերունդներին, ամրապնդելու բարեկամական կապերը և համայնքում ստեղծելու ջերմության ու համերաշխության մթնոլորտ:

Շնորհակալություն եմ հայտնում Վահրավարի վարչական ղեկավար Ռոմիկ Պողոսյանին, բոլոր վահրավարցիներին, ովքեր իրենց գործով, նվիրումով և անսպառ եռանդով նպաստել են գյուղի բարօրությանը, բոլոր նրանց, ովքեր մասնակցում են այսօրվա միջոցառմանը, օրը դարձնում տոնական ու անմոռանալի:

Վստահ եմ՝ «Վահրավարի օր» տոնակատարությունը կդառնա սերնդեսերունդ փոխանցվող ավանդույթ, որը բոլորիս կմիավորի և կոգեշնչի, համախմբելով մեկ գաղափարի շուրջ՝ սիրել և զարգացնել մեր չնաշխարհիկ բնակավայրը:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՎԱՀՐԱՎԱՐ